# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունիսի 2021թվականի N 25

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 11-ի N 8 նիստի օրակարգը.

1. Համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի N 21 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Ինքնակամ կառուցված շինություններն համայնքային սեփականություն համարելու մասին:

3. Համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսային մասում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 21 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով ավագանին որոշում է.

Համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի «Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը օտարելու մասին» N 21 որոշման մեջ կատարել ուղղում՝ 03-038-0015-0003 կադաստրային ծածկագրում «0015» թիվը փոխարինել «0115» թվով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

11 հունիսի 2021թվականի N 27

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետութան օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն ու N 912-Ն որոշումների պահանջներով հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սարգիս Մամիկոնի Սարգսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված շինությանների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնակամ կառույցները չեն գտնվում պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրի նախատեսված գոտիներում, ինչպես նաև, որ Սարգիս Մամիկոնի Սարգսյանի կողմից օգտագործված հողամասը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար՝ հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, ավագանին որոշում է,

1. Հիմք ընդունելով Սարգիս Մամիկոնի Սարգսյանի կողմից ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հրամանով հաստատված ձևին համապատասխան Դիմիտրովի համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա իր կողմից ինքնակամ կառուցված շինությունների և զբաղեցրած հողամասի կազմված հատակագիծը, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.07500 հեկտար հողամասում Սարգիս Մամիկոնի Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 375.15 քմ, պարիսպները՝ 10.76 քմ, մառանը՝ 35.95 քմ, շվաքարանը՝ 19.26 քմ, ցախանոցը՝ 85.15 քմ ճանաչել համայնքային սեփականություն:

2. Դիմիտրով համայնքի ղեկավար Արման Իոնանովին տալ համաձայնություն՝ Սարգիս Մամիկոնի Սարգսյանին՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու Դիմիտրով համայնքի 03-038-0906-0001 ծածկագրով 0.07500 հեկտար հողամասը և այդ հողամասում Սարգիս Մամիկոնի Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 375.15 քմ, պարիսպները՝ 10.76 քմ, մառանը՝ 35.95 քմ, շվաքարանը՝ 19.26 քմ, ցախանոցը՝ 85.15 քմ, որը վճարի 2057563 / երկու միլիոն հիսունյոթ հազար հինգ հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ՝ օրինականացման վճար և 0.07500 հեկտար հողամասի արժեքը (գործող կադաստրային գներով)՝ 1408275 /մեկ միլիոն չորս հարյուր ութ հազար երկու հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 3465838 / երեք միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր երեսունութ/ ՀՀ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2021թվականի N 28-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ ավագանին որոշում է.

Համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պակասեցնել 278000 (երկու հարյուր յոթանասունութ հազար) դրամ՝

1) հավելված 2-ի աղյուսակի ոլորտներ սյունյակի 11 01 02 51 տողի պահուստային միջոցներ 4891 սյունյակի <<2906.3>> թվի փոխարեն կարդալ <<2628.3>> թիվը,

2) նույնի ընդամենը տողում և սյունյակում <<2906.3>> թվի փոխարեն կարդալ <<2628.3>> թիվը,

2. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պակասեցրած 278000 (երկու հարյուր յոթանասունութ հազար) դրամը բաշխել հետևյալ կերպ.

1) 200000 (երկու հարյուր հազար) դրամ ավելացնել 06 04 01 52 /արտաքին լուսավորությանցանցի շահագործում/ 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածին՝

ա. հավելված 2-ի աղյուսակի ոլորտներ սյունյակի 06 04 01 52

տողի համապատասխան 4212 սյունյակի <<550.0>> թվի փոխարեն կարդալ <<750.0>> թիվը,

բ. հավելված 2-ի աղյուսակի ընդամենը սյունյակի <<1100.0>> թվի փոխարեն կարդալ <<1300.0>> թիվը,

գ. հավելված 2-ի աղյուսակի ընդամենը տողի <<1000.0>> թվի փոխարեն կարդալ <<1200.0 >> թիվը:

2) 78000 (յոթանասունութ հազար) դրամ ավելացնել 01 01 01 51-կառավարման մարմնի պահպանում ծրագրի 4214-կապի ծառայություն հոդվածին՝

հավելված 2 աղյուսակի ոլորտներ սյունյակի 01 01 01 51 տողի համապատասխան 4214 սյունյակի <<72.0>> թվի փոխարեն կարդալ <<150.0 >> թիվը, ընդամենը սյունյակի <<26160.0>> թվի փոխարեն կարդալ <<26238.0>> թիվը,

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՎԱՆՈՎ